

միր (Թագաւորական մարզեր) անուամբ՝ որ զագագթը ունի ընդարձակ տափարակ ուր կը զետեղուին 1000-անից աւելի վրանաբնակ քրդեր ամառուան մէջ, այս լեռն Բիւրահնեան լեռան յարեւելս արձակած շղթայի վերայ բարձրացած է, աստի ևս ուղղակի յարեւելս երկարելով մինչև Կելին (Հարս) և Մզրախ (նիզակ) կը պատէ Խալեազի, ըստ Հայր Ալիշանի «Տուարածատափ»ի¹ Հարաւն՝ ուստի շարունակելով կանցնի Ալաշկերտի գաշտի Հարաւէն, դէպի Բրձօ Ղլիճկէտուկ և Կեառէ (խուլ) ձգուելով կընդհատի Արածանւոյ սկսած վայրը (աջ ափին վերայ):

Հանդէպ Կեառէ լեռան՝ Արածանւոյ ձախ ափն ի վեր կը բարձրանան Ժաղկանց հսկայական, ընդարձակ և բարձր լեռինք² որք ի հարաւոյ կը պատեն արեւմտեան գաշտի կէսն. բուն Բաղրեանդը և Գոգովտը կը ձգուին մինչև Մակու և Խոյ:

Այս շղթայն ևս կը պարսպէ զԲաղրեանդ հարաւային կողմէն: Մէարդամիրի շղթայն կը բաժանէ Խալեազը Խնուսից, Բրձօյի և Ղլիճկէտուկի շղթայն՝ Ալաշկերտի գաշտն Անդափից: Նաև ծաղկանց լեռներն կը

1. Ըստ իմ՝ կարծեաց Տուարածատափ այժմեան Անդափ գաւառակն է, որ Ալաշկերտի վիճակի հարաւն և Մանազկերտի հիւսիսն կընկնի: Այս կարևոր գաւառակին վերայ ցարդ ո՛ր և է գրուած տեսնուած չէ, Տեղագրականիս յաւելուածին մէջ եթէ ոչ մանրամասն՝ գոնէ հարեանցի՝ ակնարկ մի պիտի ձգեմ՝ հանդերձ մի քանի հետաքրքրական աւանդութիւններով: Անդափ 140 քուրդ գիւղ ունի:

2. Այս լեռանց հովիտներու մէջ 10.000 տուն հայ գարձի քրդեր կը բնակին, որք անասունք կը բուծանեն և որիչ երկրի քրդերու հետ բաղդատելով լաւ վիճակ ունին, կը տարածուին մինչև Ապաղայ: